ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ

ՀՀ, 0001 Երևան, Հյուսիսային պող 1
+374 12 88 88 88
info@liga.am
www.liga.am

«ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Բույսերի սպասարկման ու խնամքի ծառայությունների գնային հարցմանը մասնակցելու հրավեր

01/11/2024 թ.

«Լիգա Ինշուրանս» ԱՓԲԸ-ն (այսուհետ՝ «Ընկերություն») կազմակերպում է գնային հարցում (այսուհետ՝ «Հարցում») բույսերի սպասարկման ու խնամքի ծառայություններ իրականացնող անձի (այսուհետ՝ «Մատակարար») ընտրության նպատակով:

Հարցմանը մասնակցելու իրավունք ունեն ՀՀ տարածքում պետական գրանցում ունեցող բոլոր անհատ ձեռնարկատերերը և իրավաբանական անձինք:

Կնքված և ստորագրված հայտերը PDF ֆորմատով պետք է ներկայացվեն tender@liga.am էլեկտրոնային հասցեին, մինչև 2024թ. դեկտեմբերի 2-ը ժամը 15:00: Ուշացված հայտերը չեն դիտարկվելու:

Հայտերը կամփոփվեն 2024թ. դեկտեմբերի 9-ին «Լիգա Ինշուրանս» ԱՓԲԸ-ում՝ ՀՀ, ք. Երևան, Հյուսային պողոտա 1 հասցեում:

Պահանջվող փաստաթղթերը և տեղեկությունները

Հարցմանը մասնակցող անձանցից պահանջվում է Ընկերություն ներկայացնել հետևյալ փաստաթղթերը և տեղեկությունները.

- ✓ մասնակցի անվանումը, իրավաբանական և գործունեության հասցեները, հեռախոսահամարները,
- ✓ պետական գրանցման վկայականի պատճենը,
- ✓ հարցմանը առնչվող այլ տեղեկություններ:

Բոլոր նյութերը պետք է ներկայացվեն հայերեն լեզվով:

Հաղթողի վերաբերյալ վերջնական որոշում կկայացվի, հաշվի առնելով մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը, բույսերի խնամքի և սպասարկման որակական և տեսակային համապատասխանությունը Ընկերության պահանջներին, ինչպես նաև այլ գործոններ (այլ ընկերությունների համար կատարված նմանատիպ աշխատանքների փորձը, առաջարկ ներկայացրած կազմակերպությունների վարկանիշը, Ընկերության հետ ունեցած փոխհարաբերությունները և այլն):

«Լիգա Ինշուրանս» ԱՓԲԸ-ն իրավունք է վերապահում ներկայացված առաջարկներից և ոչ մեկը չընդունել:

Մասնակիցն իր հերթին պետք է տրամադրի կոնտակտային անձի վերաբերյալ տեղեկատվություն, որը լիազորված է պատասխանելու առաջարկի դիտարկման ընթացքում ծագած հարցերին:

Լրացուցիչ և մանրամասն տեղեկությունների համար կարող եք դիմել «Լիգա ինշուրանս» ԱՓԲԸ, Տնտեսական բաժին՝ ք.Երևան, Հյուսիսային պողոտա 1 հասցեով կամ զանգահարել (374 60) 62 20 20 հեռախոսահամարով:

TÜV AUSTRIA CERTIFIED
TÜVRheinland CERTIFIED
ISO/IEC 27001:2013 Management System
www.tuv.com ID 9108645522